Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3257

491·99-8
Ч-57

2010

2002

94457-42

3277

ԱՅՐՈՒՆԵՐԸՆ

ԵՒ

491.99-8
Ա-54

ՀՆԳԵՐԸՆ

Նոր կարդալ սկսող տղայոց

Համար

Ինգերորդ Տիպ

ՁՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ
1851

955

Տղայ

Աղջիկ

Կապիկ

Աղուէս

Վագրաձի

Խոզ

Փեթակ

Ծառ

Մուկ

Ոչխար

Արծիւ

Բոյն

102195-58

Բու

Ցին

ՈՀայ

Կաքաւ

Կրիայ

Վարդ

Համար ա։

Մեծ գիր։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Քէ
ԵՒ Օ Ֆ

Համար բ։

Նօտր գիր։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը
Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ
Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո
Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր
Ց Ւ Փ Ք Օ Ֆ

Համար գ։

Ձայնաւոր գիրերը։

Ա Է Է Ը Ի Ո Օ Ու Իւ

Բաղաձայն գիրերը։

Բ Գ Դ Ղ Թ Ժ Լ Խ Ծ Կ Հ
Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Չ Պ Ջ Ռ
Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Քֆ

Ժամար Դ։

Իրարու նման գիրերը։

ա տ բ ր գ դ ե է զ ղ ը լ ժ ծ ի խ հ ձ

յ ց շ չ ո ս ջ վ ռ ւ

Ժամար Ե։

Ժեղ։

ա	ե	է	ը	ի	ո	օ	ու	իւ
աբ	եբ	էբ	ըբ	իբ	ոբ	օբ	ուբ	իւբ
ագ	եգ	էգ	ըգ	իգ	ոգ	օգ	ուգ	իւգ
աղ	եղ	էղ	ըղ	իղ	ող	օղ	ուղ	իւղ
աշ	եշ	էշ	ըշ	իշ	ոշ	օշ	ուշ	իւշ
աթ	եթ	էթ	ըթ	իթ	ոթ	օթ	ութ	իւթ
աժ	եժ	էժ	ըժ	իժ	ոժ	օժ	ուժ	իւժ

Ժամար Զ։

է	ա	ե	ը	ի	ո	օ	ու	իւ
էլ	ալ	ել	ըլ	իլ	ոլ	օլ	ուլ	իւլ
էխ	ախ	եխ	ըխ	իխ	ոխ	օխ	ուխ	իւխ
էծ	ամ	եծ	ըծ	իծ	ոծ	օծ	ուծ	իւծ
էկ	ակ	եկ	ըկ	իկ	ոկ	օկ	ուկ	իւկ
էհ	ահ	եհ	ըհ	իհ	ոհ	օհ	ուհ	իւհ
էձ	աձ	եձ	ըձ	իձ	ոձ	օձ	ուձ	իւձ

Համար Է։

ի	ա	ե	է	ը	ո	օ	ու	իւ
իղ	աղ	եղ	էղ	ըղ	ող	օղ	ուղ	իւղ
իճ	աճ	եճ	էճ	ըճ	ոճ	օճ	ուճ	իւճ
իմ	ամ	եմ	էմ	ըմ	ոմ	օմ	ում	իւմ
իյ	այ	եյ	էյ	ըյ	ոյ	օյ	ույ	իւյ
ին	ան	են	էն	ըն	ոն	օն	ուն	իւն
իշ	աշ	եշ	էշ	ըշ	ոշ	օշ	ուշ	իւշ

Համար Ը։

օ	ա	ե	է	ը	ի	ո	ու	իւ
օչ	աչ	եչ	էչ	ըչ	իչ	ոչ	ուչ	իւչ
օպ	ապ	եպ	էպ	ըպ	իպ	ոպ	ուպ	իւպ
օջ	աջ	եջ	էջ	ըջ	իջ	ոջ	ուջ	իւջ
օռ	առ	եռ	էռ	ըռ	իռ	ոռ	ուռ	իւռ
օս	աս	ես	էս	ըս	իս	ոս	ուս	իւս
օվ	ավ	եվ	էվ	ըվ	իվ	ովՀ	ուվ	իւվ

Համար Թ։

իւ	ա	ե	է	ը	ի	ո	օ	ու
իւտ	ատ	ետ	էտ	ըտ	իտ	ոտ	օտ	ուտ
իւր	ար	եր	էր	ըր	իր	որ	օր	ուր
	աւ	եւ	էւ		իւ			
իւփ	ափ	եփ	էփ	ըփ	իփ	ոփ	օփ	ուփ
իւք	աք	եք	էք	ըք	իք	ոք	օք	ուք
իւՔ	աՔ	եՔ	էՔ	ըՔ	իՔ	ոՔ	օՔ	ուՔ

Համար Ժ։

ա	ե	է	ը	ի	ո	օ	ու	իւ
բա	բե	բէ	բը	բի	բո	բօ	բու	բիւ
գա	գե	գէ	գը	գի	գո	գօ	գու	գիւ
դա	դե	դէ	դը	դի	դո	դօ	դու	դիւ
ղա	ղե	ղէ	ղը	ղի	ղո	ղօ	ղու	ղիւ
թա	թե	թէ	թը	թի	թո	թօ	թու	թիւ
ժա	ժե	ժէ	ժը	ժի	ժո	ժօ	ժու	ժիւ

Համար ԺԱ։

ե	ա	է	ը	ի	ո	օ	ու	իւ
լե	լա	լէ	լը	լի	լո	լօ	լու	լիւ
խե	խա	խէ	խը	խի	խո	խօ	խու	խիւ
ծե	ծա	ծէ	ծը	ծի	ծո	ծօ	ծու	ծիւ
կե	կա	կէ	կը	կի	կո	կօ	կու	կիւ
հե	հա	հէ	հը	հի	հո	հօ	հու	հիւ
ձե	ձա	ձէ	ձը	ձի	ձո	ձօ	ձու	ձիւ

Համար ԺԲ։

ը	ա	ե	է	ի	ո	օ	ու	իւ
ղը	ղա	ղե	ղէ	ղի	ղո	ղօ	ղու	ղիւ
ճը	ճա	ճե	ճէ	ճի	ճո	ճօ	ճու	ճիւ
մը	մա	մե	մէ	մի	մո	մօ	մու	միւ
յը	յա	յե	յէ	յի	յո	յօ	յու	յիւ
նը	նա	նե	նէ	նի	նո	նօ	նու	նիւ
շը	շա	շե	շէ	շի	շո	շօ	շու	շիւ

Ժամար ՀԺ։

ո	ա	ե	է	ը	ի	օ	ու	իւ
չո	չա	չե	չէ	չը	չի	չօ	չու	չիւ
պո	պա	պե	պէ	պը	պի	պօ	պու	պիւ
ջո	ջա	ջե	ջէ	ջը	ջի	ջօ	ջու	ջիւ
ռո	ռա	ռե	ռէ	ռը	ռի	ռօ	ռու	ռիւ
սո	սա	սե	սէ	սը	սի	սօ	սու	սիւ
վո	վա	վե	վէ	վը	վի	վօ	վու	վիւ

Ժամար ՀԺ։

ու	ա	ե	է	ը	ի	ո	օ	իւ
տու	տա	տե	տէ	տը	տի	տո	տօ	տիւ
րու	րա	րե	րէ	րը	րի	րո	րօ	րիւ
ցու	ցա	ցե	ցէ	ցը	ցի	ցո	ցօ	ցիւ
ւու	ւա	ւե	ւէ	ւը	ւի	ւո	ւօ	ւիւ
փու	փա	փե	փէ	փը	փի	փո	փօ	փիւ
քու	քա	քե	քէ	քը	քի	քո	քօ	քիւ
ֆու	ֆա	ֆե	ֆէ	ֆը	ֆի	ֆո	ֆօ	ֆիւ

Ժամար ԺԵ։

Երկաթագիր։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Քեր
Օ Ֆ

Ժամար ԺԶ։

Միավանկ բառեր։

Ազգ	Թել	Ձայն	Ձորս	Ցեց
Լեր	Ժեռ	Ղ՝ատ	Պէտք	Ւիւթ
Գիր	Ինչ	Ճանկ	Ջ՝ուր	Փակ
Դեւ	Լեռ	Մարդ	Ռահ	Փայտ
Երբ	Խաչ	Ցոյս	Սուրբ	Քաջ
Օձն	Ծոց	Նեղս	Վ՝արդ	Քար
Էգ	Կաւ	Շ՝ուն	Տէր	Օձ
Բ՝ատ	Հոգ	Ոտք	Բոք	Ֆիլ

Ես եմ։
Դուն ես։
Ան է։
Ան ո՞վ է։
Ես հոս եմ։
Դուն ո՞ւր ես։
Հոս չէ՞ս մի դուն։

Հայ բեր հոս։
Քիչ հայ կայ։
Հայ չի կայ։
Ջ՝ուր մը տուր։
Ի՞նչ ձայն է։
Մարդ մը կայ հոն։
Թոզ վեր գայ։

Համար ԺԷ։

Միավանկ բառեր։

Այծ	Իսկ	Յարդ	Տանձ
Բան	Լոյս	Նուշ	Բամ
Գեր	Խոր	Շունչ	Ցանկ
Դիր	Օրեր	Ոստ	Իւծ
Երկ	Կաթ	Չափ	Փեղկ
Օտար	Հոր	Պինտ	Փոս
Էշ	Ձուկ	Ջինջ	Քաջ
Ընդ	Ղեկ	Ուսի	Քոշ
Թագ	Ճար	Սիրտ	Օդ
Ժիր	Մխ	Վաշ	Ֆրշ

———

Սա լինչ է։
Այծ մը կայ հոս։
Շուտ ներս բեր։
Վար դիր հոս։
Թոզ տուր որ գայ։
Քիչ մը խոտ տուր։
Հոս խոտ չի կայ։
Էտ մեր ձին չէ։
Սենք հոս ենք։
Լինչ պէտք է։
Շատ գործ կայ։
Հոս լոյս չի կայ։
Հոն լոյս կայ։
Ո՞ւր տեղ լոյս կայ։

Մութ չէ՞ որ։
Հոս հոր մը կայ։
Պինտ խոր է ան։
Ջուր լեց հոս։
Հայ մը բեր վար։
Հայ ու միս կեր։
Չէ ես կուշտ եմ։
Հինգ օր պաք է։
Մէկ մեծ մարդ մը։
Խիստ ժիր մարդ մը։
Ն՞ըր հոս էր ան։
Էտ ի՞նչ գիրք է։
Սուրբ գիրք է սա։
Փառք քեզ ո՛վ Տէր։

Ժամար ժը։

Միավանկ բառեր։

Աչք	Իլիք	Ցայտ	Տուն
Բայց	Լուռ	Ներս	Բեն
Գիրք	Խելք	Շուտ	Ցուրտ
Դանկ	Ծունկ	Ուխտ	Իլս
Նռք	Կամք	Զարք	Փառք
Օարդ	Հունտ	Պարտք	Փոր
Էր	Զեռք	Ջուխտ	Քոյր
Բթ	Պովտ	Ռումբ	Քուն
Թերթ	Ղեղ	Սուտ	Օր
Ժանտ	Մեղք	Վերջ	Ֆարտ

Ես սուտ չեմ։
Ո՞վ սուտ է։
Դուն լուռ չե՞ս մի։
Ես միշտ լուռ եմ։
Ի՞նչ ցուրտ օր է
Ես ցո՞ւրտ է որ։
Ես շատ տաք եմ։
Դուն տաք չե՞ս մի։
Զէ՛ ես ցուրտ եմ։
Ան ի՞նչ հոտ է։
Հոն վարդ մը կայ։
Շուտ հոս բեր ան։
Ի՞նչ լաւ վարդ է։
Մեղք որ քիչ է։
Բայց շատ չի կար։

Տուն մը կայ հոս։
Մեծ տուն մըն է։
Շատ ցած է ան։
Ցած չէ բարձր է։
Հոտ ո՞վ կայ։
Մէկ շուն մը կայ։
Խիստ մեծ շուն է։
Ներս չի գայ։
Զէ՛ թող ներս գայ։
Ջուր մը բեր վեր։
Ջորս գիրք կար հոս։
Հոս գիրք չի կայ։
Սա տար ներս գիր։
Այսօր ի՞նչ է։
Այսօր տօն չէ։

Համար ԺԹ։

Երկու վանկով բառեր։

Ընուշ	Խրատ	Զամիչ
Բարի	Ծաղիկ	Պարտէզ
Դինի	Կարդալ	Ջրկիր
Դանակ	Հոգնած	Ուրբէն
Երես	Զրմեռ	Սեղան
Օձակ	Ղուկաս	Վերնալ
Իակ	Ճրագ	Տարբեր
Ընկեր	Մօրուք	Բախճան
Թրջուն	Յիսուս	Ցաւիլ
Ժամկոչ	Ներսէս	Փափաք
Ինչպէս	Շընորհք	Քաղաք
Լուսին	Ոսկոր	Օրէնք

Բարի լոյս։ Հոս է գիրքը։
Ի՞նչպէս ես։ Համարը գիտե՞ս։
Աղէկ եմ։ Նկոր խրատ տամ։
Դուն ի՞նչպէս ես։ Կարդա որ լսեմ։
Շատ աղէկ եմ։ Ինձի ընկեր եղիր։
Գիրքը ո՞ւր է։ Մեր տունը կու գա՞ս։
Տունը մոռցայ։ Մեծ պարտէզ ունինք։
Ինչո՞ւ մոռցար։ Շատ ծաղիկ կայ հոն։
Շուտ գնա բեր։ Պարտը կարմիր է։
Մայրիս հոն չէ։ Ընուշ հոտ ունի։
Տունը մարդ չի կայ։ Տանձի ծառ ալ կայ։
Ընոնք ժամ գացին։ Փրրցուր մէկ հատ մը։
Ես շատ հոգնած եմ։ Նայինք հասո՞ւն է։

Համար Ի։

Երկու վանկով բառեր։

Ընձրեւ	Խոնարհ	Զաւեալ
Բժիշկ	Ծառայ	Պարան
Դարի	Կանանչ	Ջրնջոց
Դրպիր	Հիւանդ	Ոակայ
Երեկ	Ձեզմով	Սիրուն
Օրեղ	Ղենջակ	Վարպետ
Իրե	Ճարպիկ	Տաճար
Ընտիր	Մանուկ	Բաբուն
Թեթեւ	Յովսեփ	Ցեխոտ
Ժառանգ	Նրստիլ	Փախչիլ
Իշխան	Շաբաթ	Քարոզ
Լեցուն	Ուտել	Օծում

Եղբայրքս խիստ հիւանդ է։
Երեկ բժիշկը չեկաւ։
Մեր բժիշկը վարպետ մարդ է։
Ընտաւը անձրեւ չի գար։
Լեռները ու դաշտերը կը կանանչին։
Կովերը դաշտին մէջ կ'արածին։
Կովերը մեզն կաթ կու տան։
Ոչխարը կաթ ու բուրդ կու տայ։
Ձիերը յարդ ու գարի կ'ուտեն։
Իշը ծոյլ կենդանի է։
Օձ ջուտէ նէ չի քալեր։
Յովսեփը սիրուն տղայ է։
Միշտ աղէկ կը սերտէ իր համարը։

Համար իա։

Իրեք վանկով բառեր։

Աղանի	Խորագէտ	Զարշարանք
Բարեկամ	Օրերունի	Պատուհաս
Գեղեցիկ	Կարապետ	Ցախջախել
Դատաւոր	Համբերող	Ոսկեաւոր
Երեսուն	Զուարթող	Սասանել
Օգաքէոս	Ղեկավար	Վարդապետ
Լութիւն	Ճարտասան	Տիրացու
Ընթերցող	Մարտիրոս	Բենատեռ
Թագաւոր	Յատկապէս	Ցընծալով
Ժամանակ	Նազելի	Փեսաւէր
Իմաստուն	Շընորհել	Քաջութիւն
Լուսաւոր	Ողջակէզ	Օրինակ

Եկուր քեզի հետ խօսինք։
Ես առտու ե՞րբ արթընցար։
Արեւը ծագելուն պէս ելայ։
Աղէկ ժամանակ ելեր ես։
Կանուխ ելլելը շատ օգտակար է։
Կրընաս աղօթք ընել ու կարդալ։
Ուտելեան հովը անուշ կը փչէ։
Թրռչունները անուշիկ կ'երգեն։
Սա ի՞նչ թրռչուն է՝ գիտե՞ս։
Աղանի կ'ըսեն անոր։
Շատ գեղեցիկ ձայն ունի։
Աղանին միամիտ է։
Օձը խորագէտ է։

Համար իբ։

Իրեք վանկով բառեր։

Աբրահամ	Խրատասիրտ	Զարութիւն
Բանական	Ծիրանի	Պրտուտակ
Գիտութիւն	Կերակուր	Ջերմութիւն
Դատաստան	Հակառակ	Ռամկական
Եղանել	Զայնակից	Սովորոյթ
Օտարդարանք	Ղեւտացի	Վարագոյր
Էական	Ճշմարիտ	Տաղարան
Ընտանի	Մարգարէ	Բաբունի
Թողութիւն	Յարութիւն	Ցանկալի
Ժողովուրդ	Նորոգել	Փառաւոր
Ինձանել	Շարական	Քրիստոս
Լեռնական	Ոսկեղէն	Օրհնութիւն

Միշտ պէտք է ճշմարիտ խօսիլ։
Սուտ խօսիլը մեծ մեղք է։
Աստուծոյ կամքին հակառակ է։
Խնաստուն մարդը պատվելու է։
Մեծերուն խրատը պահելու է։
Պրտուտակը տրղոց խաղալիկ է։
Երբեմն խաղալը աղէկ է։
Խաղալը ու կարդալը մէկտեղ չըլլար։
Ամէն բան ժամանակ ունի։
Խաղն մէջ կրուիւ ընելը դէշ բան է։
Համբերող ըլլալը մեծ բան է։
Գիտե՞ս Քրիստոս ի՛նչ ըսաւ։
Մինչև վերջը համբերողը կ'ապրի՝ ըսաւ։

Համար ԻԳ։

Չորս վանկով բառեր։

Առաքինի	Յամանակաւ
Բնակարան	Խմաստութիւն
Գեղեցկութիւն	Լուսաւորիչ
Դարձուցանել	Խաղաղութիւն
Երախտաւոր	Օգնուցանել
Օրինաւորական	Պաթուղիկոս
Լակութիւն	Համբերութիւն
Ընկերութիւն	Շիադարման
Թագաւորել	Վեկավարել

Մենուն հետ սիրով վարվէ։
Առաքինի մարդու հետ ընկեր եղիր։
Միշտ ուրիշին աղեկութիւն ըրէ։
Աշխարհի գեղեցկութիւնը անցաւոր է։
Արքայութեան փառքը անվախճան է։
Աստուբերուն բընակարանը երկինքն է։
Երկինքին մեծութիւնը մըտքէ դուրս է։
Հապա անոր Արարիչը որչափ մեծ է։
Աստուծոյ խմաստութիւնը անհուն է։
Յամանակնիս պարապ անցընելը աղեկ չէ։
Օրէ օր պէտք է գիտութիւն սորվինք։
Գիտուն ազգերը հարուստ են։
Լուսաւորիչ մեր ազգը հաւատքի բերաւ։
Առաջ մեր ազգը կիրթապաշտ էր։
Համբերութիւնը մեծ առաքինութիւն է։
Շիադարման ձի եայող ըսել է։

3277
10219-58
40571
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

Ժամար իդ։

Ձորս վանկով բառեր։

Ճշմարտութիւն	Ամկավայել
Մբխիթարիչ	Սրգաւորիլ
Յորդորելով	Պաճառական
Նախատօնակ	Տարակուսիլ
Շընորհալի	Բարունաբար
Ողորմութիւն	Ցրտացընել
Ձափահասակ	Փախստական
Պակսեցընել	Քաղաքավար
Ջանասիրել	Օժանդակել

Քրիստոս է Ճշմարտութիւն։
Մբխիթարիչ կ՚ըսուի Սուրբ Հոգին։
Ընծիտը յորդորելով խրատէ։
Ամէն գործիդ մէջ շընորհքով շարժէ։
Որ քեզի շընորհալի տրղայ է՝ ըսեն։
Ընշընորհք տրղան մէկը չի սիրեր։
Խեղճերուն ողորմութիւն ըրէ։
Կարդալ չի սորվողը տրգէտ կը մընայ։
Կարդալ ու գրրելը շատ հարկաւոր է։
Ընով կրընայ մարդ վաճառական ըլլալ։
Ամարրդ գրժուար ըլլայ նէ մի՝ տրրտմիր։
Աշխատէ՝ սիրով յառաջ երթալ։
Սէրը ամէն բանի կը յաղթէ։
Գողերը միշտ թափառական կ՚ապրին։
Քաղաքավար տրղան ամենուն սիրելի է։
Օժանդակել եարտրմ ընել ըսել է։

Համար իմ։

Հինգ վանկով բառեր։

Արեգակնակերպ	Ժողովրդապետ
Խանաստեղծութիւն	Իմաստասիրող
Գոհաբանական	Լուսափայլութիւն
Դիւահարութիւն	Խաւարաբընակ
Եկեղեցական	Օտծկագիտութիւն
Օգնմացուցանել	Կամաւորական
Լացուցանող	Հայրապետութիւն
Ընդունայնասէր	Ձեռագործութիւն
Թրմբրեցուցանել	Ղենջակավաճառ

Արեգակնակերպ արեգակի պէս ըսել է։
Խանաստեղծութիւնը գիտութիւն է։
Ամէն գիտութիւն գովելի է։
Տգիտութիւնը մութ ու խաւար է։
Բայց իմաստութիւնը պայծառ լոյս մըն է։
Դիւահարութիւնը գէշ ախտ է։
Եկեղեցական կ'ըսուին կարգաւորները։
Տիրացուները ու ժամկոչներն ալ։
Ընդունայնասէր, պարապ բաներ սիրող։
Լուսափայլութիւն, լուսի պէս փայլելը։
Խաւարաբընակ, մութը բընակող։
Օտծկագիտութիւն, գաղտնի բան գիտնալը։
Կամաւորական, կամքով եղած բան։
Կաթուղիկոսութիւն և հայրապետութիւն մի և նոյն բան է։
Ղենջակավաճառ, փէշտրմալ ծախող։

Համար իշ։

Վեց վանկով բառեր։

Ճոռոմաբանութիւն	Սասանեցուցանել
Մեղանչականութիւն	Վախճանեցուցանել
Յիշողականութիւն	Տիեզերահրաշ
Նրմանեցուցանել	Բաբունապետութիւն
Շընորհաւորութիւն	Ցորենաբաշխութիւն
Ուսումնականութիւն	Փեսայացուցանել
Չարաբարոյութիւն	Քաղաքավարութիւն
Պարկեշտախօսութիւն	Օտարասիրութիւն
Ց՚ըրավաճառութիւն	Ֆիզիկականութիւն

Տուն շինելու արհեստին ճարտարապետութիւն կ՚ըսեն։

Կաղանդին օրը իրարու շընորհաւորութեան կ՚երթան

Ուսումնականութիւնը շատ գովելի բան է։

Փեսայացուցանել փեսայ ընել ըսել է։

Քաղաքավարութիւն չունեցողը կոպիտ ու անկիրթ է։

Օտարասիրութիւն օտարները սիրել ու անոնց բարի ընել է։

Ղ՚ովտ ու Աբրահամ երկուքն ալ հիւրասէր էին։

Ինոր համար հրրեշտակներ տեսնելու արժանի եղան։

Համար ԺԷ։

Աստուած ստեղծեց երկինքը ու երկիրը։
Ու անոնց մէջը եղած ամէն բաները։
Ադամ նախահայրը առաջին մարդը։
Ու անոր կողէն իր Եւայ կինը։
Աստուած ստեղծեց նա եւ մեզ։
Ու ամէն օր ան կը պահէ մեզ։
Աստուած կու տայ մեր հացը ու հանդերձը։
Ու մեզի պէտք եղած ամէն բաները։

Համար ԺԸ։

Աստուած ամենուն վերայ թագաւոր է։
Ինքը սուրբ ու իմաստուն է։
Արդար ու ճշմարիտ է։
Մեր ամենուն երկնաւոր Հայրն է։

Պէտք է որ զինքը սիրենք ու իրմէն վախնանք
Իր պատուիրանքները պահենք ։
Պըզտիկուց զինքը ճանչնանք ։
Ու իրեն կամքը սորվինք ։

Համար ԻԹ ։

Աստուած հոս է՝ և ամէն տեղ է ։
Ամէն բան գիտէ ու կը տեսնէ ։
Երբ որ աղօթք ընենք՝ մեր ձայնը կը լսէ ։
Մեզի շընորհք կու տայ ու մեզ կը սիրէ ։
Երբ որ մեղք գործենք՝ մեզ կը պատժէ ։
Հոգինիս զըժոխքը կը խըրկէ ։
Ինանկ է նէ՝ աղօթք ընենք ։
Որ մեզ մեղքէ ազատ պահէ ։

Համար ՀԸ ։

Բարի տըղաքը Աստուծմէ կը վախնան ։
Թէ որ Աստուած կը սիրես, ան ալ քեզ կը սիրէ ։
Ես կը սիրեմ Աստուածը, որ ան ալ իս սիրէ ։
Ես կը վախնամ իրմէն ու կը պահեմ իր խօսքը ։
Աստուծոյ խօսքը ճշմարիտ է ։
Աստուծոյ խօսքը Աստուածաշունչին մէջ է ։
Աստուածաշունչը ամէն գիրքէն աղէկ է ։
Հին և Նոր կըտակարանը Աստուածաշունչ է ։

Հատոր ԼԹ։

Աստուած մեզ սիրելուն իր Որդին տրվաւ։
Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ է։
Ինքը մեր Տէրը ու Փրկիչն է։
Կատարեալ մարդ ու կատարեալ Աստուած է։
Քրիստոս մեզ սիրելուն երկինքէն իջաւ։
Մեզի համար խաչին վրայ մեռաւ։
Աշխարհքի մեղքին համար արիւն թափեց։
Մեզ Աստուծոյ հետ հաշտեցուց։

Հատոր Լ։

Յիսուս Քրիստոս խաչվեցաւ ու թաղվեցաւ։
Իրեք օրէն յարութիւն առաւ։
Քառասուն օր աշխարհի վրայ կեցաւ։
Նոքը երկինքը համբարձաւ։
Դատաստանին օրը նորէն պիտի գայ։
Արդարները մեղաւորներէն պիտի զատէ։
Արդարները Արքայութիւն պիտի տանի։
Մեղաւորները Դժոխք պիտի խրկէ։

Հատոր ԼԳ։

Ո՛վ Տէր՝ ինձի շընորհք տուր որ քեզ սիրեմ։
Ու քու պատուիրանքներդ պահեմ։
Նա եւ իմ ընկերներդս սիրեմ։
Ու անոնց բարի ընեմ։
Ո՛վ Տէր՝ իմ անմահ հոգիս փրկէ։

Սուրբ Արքայութեանդ արժանի ըլլէ ։
Ո՛վ Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի ։
Սուրբ Երրորդութիւն անբաժանելի ։

Աստուծոյ տասը պատուիրանքը ։

Ինծմէ 'ի զատ ուրիշ աստուած մի՛ պաշտեր ։
Կուռքի առջեւ բնաւ ծունկիդ մի՛ ծռուեր ։
Երդում մ'ըներ Տէր Աստուծոյդ անուամբը ։
Ու մի՛ պրծեր հանգիստութեան սուրբ օրը ։
Քու ծնողքիդ արժանաւոր պատիւ տուր ։
Սպանութեան մեղքը քեզմէ հեռացուր ։
Օգոյշ կեցիր պիղծ գործքերէն խօսքերէն ։
Մի՛ գողանար , թէ եւ խեղճ ես ամենէն ։
Սուտ մի՛ խօսիր , ու սրտութիւն մի՛ սիրեր ։
Քու ընկերիդ ունեցածին մի՛ ցանկար ։

Տասը պատուիրանքին բովանդակութիւնը ։

Բոլոր սրտանց Աստուած սիրես ,
Քու ընկերդ ալ քու անձիդ պէս ։

Համար ԼԴ։

Արևը երբոր արևելքէն կը ծագէ՝ ան ատենը առտու է · ուստի պէտք է որ արթննանք՝ աղօթք ու երկրրպագութիւն ընենք Աստուծոյ։

Յետքը կարդանք, ուտենք, գործենք, կամ ղրպրատուն երթանք՝ կարդալ գրրել ու գիտութիւն սորվինք։

Արևը երբոր արևմուտքէն կը մրտնէ՝ ան ատենը իրիկուն կամ գիշեր է · Թռչունները՝ ոչխարները՝ ձիերը ու ամէն կենդանիները քընանալու կ'երթան։

Մենք ալ աղօթք կ'ընենք ու կը քընանանք · ինչու որ քունը հանգըստութիւն կու տայ մարդուն · բայց Աստուած ամենեւին չի քընանար։

Նայէ՝ վերի պատկերին մէջը գրրված շընորհալի աղջիկներուն · անոնց մայրը սորվեցուցեր էր իրենց ամէն իրիկուն աղօթք ընել, ու հապա երթալ պառկելու։

Համար ԼԵ։

Աստուած աշխարհը վեց օրվան մէջ ստեղծեց։

Կիրակի օրը լոյսը ստեղծեց՝ ու խաւարը լոյսէն զատեց. լոյսին ցորեկ ըսաւ՝ ու խաւարին գիշեր ըսաւ։

Երկուշաբթի օրը երկինքը շինեց, ու աստղերուն կամարին հաստատութիւնը։

Երեքշաբթի օրը երկրին հողը ու ջուրը իրարմէ զատեց. ջուրը ծով ըրաւ՝ ու հողը չորցուց ցամաք ըրաւ՝ ու խոտեր բուսցուց։

Չորեքշաբթի օրը արեգակը լուսինը ու աստղերը շինեց։

Համար ԼԶ։

Հինգշաբթի օրը ծովին մէջ ձուկեր ստեղծեց, ու օդին մէջ թռչուններ։

Ուրբաթ օրը ցամաքին վրայ չորս ոտքով կենդանիներ, անասուններ, գազաններ ու սողուններ ստեղծեց։

Ու ամէն բաներէն ետքը Մարդը ստեղծեց իր կերպարանքին պէս, ու անոր անունը Ադամ դրաւ։

Ադամին կողէն Եւայ կինը շինեց, ու աս երկուքէն մարդիկ շատցան աշխարհի վրայ։

Շաբաթ օրը հանդիսացաւ Աստուած իր ամէն ստեղծած գործքերուն։

Ուստի շաբաթ օրը հանդիստութեան օր ըլլալուն համար, հին ատենը Քրիստոսէն առաջ հրեաները չէին բաներ։

Հատոր Լէ։

Արեգակին՝ լուսինին ու աստղերուն կեցած տեղը կ'ըսվի Երկինք։

Հողին ու ջուրին՝ որոնց վրայ մենք կը բնակինք, կ'ըսվի Աշխարհ կամ Երկիր։

Աշխարհս կը լրը գունտ մըն է. ու քրիստոնյաներս ժամին մէջ արևմուտքէն դէպ 'ի արևելք մէկ անգամ կը դառնայ։

Արևելք կ'ըսվի արևին ու լուսինին ելած կողմը։

Աշխարհս չորս կողմ ունի. Արևելք, Արևմուտք, Հարաւ, Հիւսիս։

Երբոր երեսդ Արևելքին դարձընես, կրոնակիդ կողմը Արևմուտք է. աջ ձեռքիդ կողմը Հարաւ է, ձախ ձեռքիդ կողմը Հիւսիս է։

Հատոր ԼԲ։

Ժամանակ կ'ըսվի աշխարհի ստեղծվելէն մինչև վերջը եղած ատենը։

Ժամանակը իրեք կը բաժնվի. Ներկայ, Անցեալ ու Ապառնի։

Ներկայ կ'ըսվի հիմակու ժամը։

Անցեալ կ'ըսվի երէկ կամ առջի ատենները։

Ապառնի կ'ըսվի վաղը կամ գալու ատենները։

Սակայն 'ի զատ ժամանակը եօթը կը բաժնվի. Տարի, Ամիս, Շաբաթ, Օր, Ժամ, Րոպէ, Վայրկեան։

Աչք գոցել բանալու չափ ատենը մէկ մանրերկրորդ մըն է ։

Վաթսուն մանրերկրորդը մէկ րոպէ մը կ՚ընէ։

Վաթսուն րոպէն մէկ ժամ մը կ՚ընէ ։

Քրսանը չորս ժամը մէկ օր մը կ՚ընէ ։

Եօթը օրը շաբաթ մը կ՚ընէ ։

Երսուն օրը ամիս մը կ՚ընէ ։

Տասներկու ամիսը տարի մը կ՚ընէ ։

Մէկ տարին աւ իրեք հարիւր վաթսունը հինգ օր ունի ։

Համար լԹ ։

Ամիսներուն անունները ասոնք են ։

Յունվար ,	Մայիս ,	Սեպտեմբեր ,
փետրվար ,	Յունիս ,	Հոկտեմբեր ,
Մարտ ,	Յուլիս ,	Նոյեմբեր ,
Ապրիլ ,	Օգոստոս ,	Դեկտեմբեր ։

Յունվար , Մարտ , Մայիս , Յուլիս , Օգոստոս , Հոկտեմբեր , Դեկտեմբեր · ասոնք ամիսները երսունմէկական օր ունին ։

Ապրիլ , Յունիս , Սեպտեմբեր , Նոյեմբեր · ասոնք ամիսներն աւ երսունական օր ունին ։

փետրվարը քրսանրուԹը օր ունի · բայց չորս տարին հեղ մը քրսանրվինը օր կ՚ըլլայ , ուրան տարին Նահանջ տարի կ՚ըսվի ։

Յունվարին առջի օրը Կաղանդ է ։

Համար Ե։

Մէկ տարին չորս Եղանակ ունի. Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ։

Ամէն մէկ եղանակն ալ երեքական ամիս ունի։

Մարտ, Ապրիլ, Մայիս. աս ամիսները Գարուն է. ծառերը կը կանանչին, ծաղիկները կը բացվին։

Յունիս, Յուլիս, Օգոստոս. աս ամիսները Ամառ է. խընձորը, տանձը, խաղողը, և ուրիշ պտուղները կը հասնին։

Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր. աս ամիսները Աշուն է. ծառերուն տերևները կը թափի։

Դեկտեմբեր, Յունվար, փետրվար. աս ամիսները Ձմեռ է. շատ անձրև ու ձիւն կու գայ ու ցուրտ կ'ըլլայ։

Համար Զ։

Օրերուն անունները ասոնք են։

ԿԻՐԱԿԻ

Երկուշաբթի,	Հինգշաբթի,
Երեքշաբթի,	Ուրբաթ,
Չորեքշաբթի,	Շաբաթ։

Շաբաթ ըսելը հանգիստ ըսել է. որ Քրիստոսէն առաջ Աստուած պատուիրեց հրեաներուն սուրբ պահել աս օրը։

Կիրակի ըսելը Յունարէն Տէրունի ըսել է. այսինքն Տէրոջը օրը, կամ Աստուծոյ օրը ըսել է։

Առաքեալները 'ի պատիւ Քրիստոսի յարութեան՝ Շաբաթ օրվան սրբութիւնը Կիրակի աւուր փոխեցին · ու անոր համար մենք կը պարտաւորինք Կիրակի օրը սուրբ պահել · խաղալէն՝ ժուռ գալէն՝ ու ամէն մարմնաւոր գործքերէն ետ կենալ · սուրբ Եկեղեցի երթալ , Աստուծոյ անունը փառաբանելով աղօթք ընել , ու մեղքերնուս համար թողութիւն խնդրել ։

Համար Խ։

Ո՛վ Տըղաք ու աղջիկներ , «Աստուծոյ Սուրբ Հոգին մի՛ տրրտմեցընէք» մեղք գործելով ։

Մէկ դի ձրգեցէք բարկութիւնը , սրրտմտութիւնը , ջարութիւնը , հայհոյութիւնը , խեղկատակութիւնը ձեր բերաններէն · իրարու սուտ մի՛ զբրուցէք ։

Մէկրզմէկու հետ անուշ եղէք , գրթած , նեբրելով մէկրզմէկու , ինչպէս որ Աստուած՝ Քրիստոսով ներեց մեզի ։

Աստուծոյ նրմանող եղէք սիրելի զաւակներու պէս · և սիրով վարվեցէք՝ ինչպէս որ Քրիստոս ալ մեզ սիրեց , ու իր անձը մեզի համար մատնեց , անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ ։

Համար խդ։

Մարմնին գործքերը։	Հոգւոյն պտուղները։
---	---	
Պոռնկութիւն,	Սէր,
Կռապաշտութիւն,	Խնդութիւն,
Թշնամութիւն,	Խաղաղութիւն,
Կռիւ,	Երկայնմտութիւն,
Նախանձ,	Քաղցրութիւն,
Բարկութիւն,	Բարութիւն,
Հակառակութիւն,	Հաւատարմութիւն,
Ըսպանութիւն,	Հեզութիւն,
Դինովութիւն,	Ժուժկալութիւն։
Ընառակութիւն։	Դատապարտութիւն չի կայ Քրիստոս Յիսուսով եղողներուն՝ որոնք մարմնաւոր կերպով չեն վարվիր։

Այսնկ բաներ գործողները՝ Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգեր։

Համար խդ։

Ի՞նչ կ՚ըսէ Սուրբ Գիրքը։

Ոչ պոռնիկները, ոչ կռապաշտները, ոչ գողերը, ոչ գինոփները, ոչ բամբասողները, Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգեր։

Ուստի ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ սրբութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ որ քաջութիւնով, ինչ որ գովութիւնով, ան բաները խորհեցէք։ Ինչ որ սորվեցաք ու առիք՝ և լսեցիք ու տեսաք իմ վրայս, ան ըրեք. և խաղաղութեան Աստուածը ձեր հետը ըլլայ։

Համար խե։

Պատիւով գրուած սովորական բառեր։

Հիմա՝ իմ սիրելի կարդացողները, պէտք է որ հոս սորվիք պատիւով գրուած քանի մը բառեր, որ ասկէ ետքը ուր տեսնաք նէ անոնք, դիւրաւ կարդաք։

Ամ	ամենայն	Յսի, Յի	Յիսուսի
Ամքն	ամենեքեան	Նր	Նորա
Ամցն	ամենեցուն	Նմ	Նմա
Այ	այսինքն	Նք	Նոքա
Աջ	Աստուած	Նց	Նոցա
Այ	Աստուծոյ	Նն	Նոսա
Ավ	Աստուծով	ոպ	որպէս
Դր	դորա	պն, ոպ	պէս
Դմ	դմա	սրբ	սուրբ
Դք	դոքա	սր	սորա
Դց	դոցա	սմ	սմա
Եղ	եալ	սց	սոցա
Զր	զոր օրինակ	վն	վասն
Ընդ	ընդ	վր	վերայ
Ըստ	ըստ	տր	տէր
Թի, ի	Թիւն	տն, ան	տեառն
Թե, ե	Թեան	տրբ	տերամբ
Թբ, բ	Թեամբ	Քն	քան
Թէ, է	Թենէ	Քս	Քրիստոս
կմ, կ	կամ	Քսի, Քի	Քրիստոսի
Յս,	Յիսուս	Լն	Լայլն

Կէտերուն անուններուը։

Ռութ	(՝)	Հարց	(՞)
Ստորակէտ	(,)	Պարոյկ	(՟)
Միջակէտ	(.)	Պատիւ	(՝)
Վերջակէտ	(:)	Ընթամեջ	(-)
Անակէտ	(՛)	Փարենթեզիզ	()

Համար ԽԴ։

Յիսուս Քրիստոս երբոր աշխարհի վրայ էր՝ շատ կը սիրէր պզտիկ տղաքները ու աղջիկները։

Օր մը Յիսուսին քովը տղաքներ ու աղջիկներ բերին՝ որ ձեռքը անոնց վրայ դրնէ ու օրհնէ զանոնք։

Բայց իր աշակերտները տղաքը բերողները կը ջնջէին, ու չէին ուզեր որ Յիսուսի քովը գան։

Յիսուս երբ որ աս բանը տեսաւ, սրդողեցաւ իր աշակերտներուն, ու ըսաւ. Թողէք տղաքը որ քովիս գան։

Ու երբոր տղաքը իրեն քովը գացին, գիրկը առաւ զանոնք, ձեռքը վրանին դրաւ, ու օրհնեց զանոնք։

Համար ԼԷ։

Ո՛վ Տէր իմ Յիսուս Քրիստոս, իս ալ ան տղոցը մէկուն պէս օրհնէ, ու քու Աստուածային ձեռքիդ շուքին տակը իս պահէ։

Ես կը հաւատամ Տէր իմ, որ դուն երկրի վրայ եղած ատենդ ինչպէս որ կը սիրէիր տղաքները ու աղջիկները, անանկ ալ հիմա երկինքէն կը սիրես աղէկ տղաքը ու աղջիկները, ու քու օրհնութիւնդ կը խրրկես անոնց վրայ։

Սիրելի՛ Յիսուս՝ դուն աշխարհ եկար ,
Մարմին առնելով տրղայ մը եղար ·
Խնամութիւնով ու սուրբ շընորհքով ,
Ընդանդուլթեամբ կատարեալ մեծցար ։
Ան բարիքները , Տէր , ինծի՛ ալ տուր ,
Իմ մանկութիւնս շընորհքով մեծցուր ·
Ես կը փափաքիմ քեզի պէս ըլլալ ,
Կը խընդրեմ քեզմէ փափաքիս լեցուր ։

Ամար խը ։

Ջրհեղեղէն ետև բոլոր երկրին լեզուն մէկ՝ ու խօսվածքը մէկ էր ։

Ու եղաւ որ երբ արևելքէն կը չուէին , Սենաար երկրին մէջ դաշտ մը գտան , ու հոն բընակեցան ։

Ու իրարու ըսին · Եկէք՝ աղիւսներ շինենք , ու զանոնք կրակով եփենք ։ Ու աղիւսները անոնց քարի տեղ եղաւ , ու ճիւթը անոնց սեխի տեղ եղաւ ։

Եւ ըսին · Եկէք՝ մեզի քաղաք մը ու աշտարակ մը շինենք, որ անոր գլուխը մինչև երկինքը հասնի, և մեզի անուն ըստանանք, որ չըլլայ թէ բոլոր երկրի վրայ ցրվինք ։

Եւ Տէրը՝ մարդոց որդիներուն շինած քաղաքը ու աշտարակը տեսնելու իջաւ ։

Եւ Տէրը ըսաւ · Ահա՛ ասոնք մէկ ժողովուրդ մըն են, ու ամենուն լեզուն մէկ է · և ասիկայ շինելու ըսկըսեցին · ու հիմա ի՞նչոր շինել կը խորհին, անոնցմէ պիտի չարգիլուի ։ Եկէք իջնենք, և անոնց լեզուն հոն խառնակենք, որ ամէն մէկը իր ընկերին լեզուն չըհասկրնայ ։

Եւ Տէրը անկէ բոլոր երկրին երեսը ցրվեց զանոնք · ու քաղաքը շինելէն դադրեցան ։

Ընոր համար անոր անունը Բաբիլոն (այսինքն՝ խառնակութիւն) կոչվեցաւ · ինչու որ Տէրը հոն բոլոր երկրին լեզուն խառնակեց, և Տէրը անկէ բոլոր երկրին երեսը ցրվեց զանոնք ։ Ծննդ · ԺԱ · 1—9 ։

Ժամար խԹ ։

Մովսէս մարգարէն երբոր Իսրայէլացիները Եգիպտոսէն հանեց՝ ու Աբեսեայ երկիրը պիտի տանէր Աստուծոյ հրամանովը, անապատին մէջը ջուր չգտար որ ժողովուրդը խըմէ · ուստի գացին Մովսէսին ըսին · Մեզի ջուր տուր որ խըմենք ։

Մովսէս ալ երբոր Աստուծոյ աղաչեց, Աստուած հրաման ըրաւ որ իր գաւազանը ձեռքը առնէ, ու ժողովուրդին ծերերէն հետը առնէ երթայ Քորեբ լեռը, ու հոն գաւազանովը ապառաժ քարին զարնէ, և քարէն ջուր պիտի ելլէ ժողովուրդին խըմելու ։

Աստուծոյ ըսածին պէս երբոր Մովսէս գաւազանը քարին զարկաւ, բոլոր ժողովուրդին առջին քարէն անանկ աղբիւր մը բըղխեց, որ գետի պէս կը վազէր Կերթար ջուրը · ուստի ժո-

ղովուրդը շատ ուրախացաւ ան բանիս վրայ ։ ու փառք տըվին Աստուծոյ որ իրենց ողորմեցաւ ։

Հիմա ան ապտուած քարը օրինակ էր Քրիստոսի ։ ու անկէ բղխած աղբիւրը օրինակ էր ան պատուական արիւնին՝ որ Քրիստոսի կողէն աղբիւրի պէս վազեց ։

Ա՛ս պատուական աղբիւրը՝ չէ թէ մարմնաւոր ծարաւութիւնը կ՚անցընէ կամ՝ աղտը կը մաքրէ ան հին աղբիւրին պէս ։ հապա՝ հոգիներնուս մեղաց աղտոտութիւնը կը լըվայ ու կը սրբէ ։

Իմմանուէլ՝ Տէ՛ր Յիսուս ,
Աղբիւր կենաց մեզ բացիր ։
Ողորմեցար հոգիներուս ,
Խաչ ու մեռնիլ յանձն առիր ։

Քու սուրբ կողեդ արիւնը ,
Աղբիւրի պէս որ վազեց ։
Աւազակին մեղքերը ,
Լըւաց մաքրեց ու սրբրեց ։

Գառն Աստուծոյ հոգիներս ,
Ան աղբիւրին մէջ լըվա ։
Կ՚աղաչենք , Տէր , մեղքերնիս
Սուրբ արիւնովըդ լըվա ։

Հատոր ՃԾ ։

Յիսուս մէկ օր մը Նային քաղաքը կ՚երթար ։ ու իր աշակերտները և շատ ժողովուրդ իր հետը կ՚երթային ։

Երբոր քաղաքին դրանը մօտեցաւ, ահա՛ քաղաքէն մեռեալ մը կը հանէին, ու անիկայ որբէվարի կնկան մը մէկ հատիկ զաւակն էր, և թաղելու կը տանէին։

Խեղճ որբէվարի կնիկը իր մէկ հատիկ զաւակին մեռնելուն համար շատ կսկիծ ունէր, ու կու լար։

Յիսուս երբոր տեսաւ կնիկը՝ մեղքցաւ անոր, ու ըսաւ. Մի լար։

Եւ գնաց դագաղին քովը՝ մեռելին մօտեցաւ, ու ըսաւ. Ո՛վ պատանի, քեզի կ'ըսեմ, ելիր։

Մէյմ'ալ նայիս մեռելը ոտքի ելաւ նստաւ դագաղին մէջ, ու սկսաց խօսիլ. մայրը երբոր տեսաւ շատ ուրախացաւ, ու իր սիրական տղան առաւ տուն տարաւ։

Յիսուս Քրիստոս դատաստանին օրը ամենուս պիտի ըսէ ան տղուն ըսած խօսքը. Քեզի կ'ըսեմ մեռելներ, ելէք, ոտքի ելէք։

Ան ատենը ամէնքս ալ պիտի ոտքի ելնենք, ու իր առջևը կայնինք՝ որ մեզ դատէ։

Ո՛վ Տէր՝ խա մի՛ ամբաստաներ ան օրը. ուրախացուր իմ հոգիս, խա Երկինքը՝ Աբքայութիւնը տանելով. որ հոն յաւիտեանս յաւիտենից քեզի հետ ապրիմ, ու քեզ փառաւորեմ։

Մարդասէ՛ր Փրկիչ՝ հիմա է ժամը,
Այսօր է ահա՛ փրկութեան օրը.
Ներէ մեղքերդս փրկէ իմ հոգիս,
Կը խնդրեմ յիշէ խա ան մեծ օրը։

Համար Ծ։

Ու աշակերտները շուտ մը արտորցուց նաւ մը մտնել՝ և իրմէն առաջ մէկալ կողմը անցնիլ, մինչև որ ինքը ժողովուրդները արձակէ։

Եւ ժողովուրդները արձակելէն ետքը՝ ինքը մինակ լեռը ելաւ աղօթք ընելու. և երբոր իրի-կուն եղաւ՝ հոն էր մինակ։

Ու նաւը շատ ասպարէզով ցամաքէն բացված ալէկոծութեան մէջ էր, ինչու որ հովը դէմ էր։

Ու գիշերվան չորրորդ պահուն Յիսուս դէպ 'ի իրենց եկաւ՝ ծովին վրայէն քալելով։

Աշակերտները երբոր անիկայ տեսան՝ որ ծո-վին վրայ կը քալէր, շփոթեցան, և ըսին թէ աչքի երևոյթ բան մըն է. ու վախերնուն կանչ-վրտեցին։

Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց՝ ու ըսաւ. Քա՛ջ եղէք՝ ե՛ս եմ, մի՛ վախնաք։

Պետրոս պատասխան տուաւ անոր՝ ու ըսաւ.

Տէր՝ թէ որ դուն ես, հրաման ըսէ ինծի՝ որ քեզի գամ՝ ոտ Ջուրերուն վրայէն։

Ան ալ ըսաւ. Եկո՛ւր. Պետրոս ալ նաւէն իջաւ, Ջուրերուն վրայէն քալեց, և եկաւ Յիսուսին։

Ու հովը սաստիկ տեսնելով՝ վախցաւ, և երբոր սկսեց ընկղմիլ, կանչվրտեց ու ըսաւ. Տէր՝ ազատէ՛ զիս։

Եւ Յիսուս շուտ մը իր ձեռքը երկընցուց, բռնեց զանիկայ ու ըսաւ. Թէ՛ քահաւատ՝ ինչո՞ւ երկբայեցար։

Եւ երբոր նաւը ելան՝ հովը դադրեցաւ։

Ու անոնք որ նաւին մէջն էին, եկան իրեն երկրպագութիւն ըրին՝ և ըսին. Իրաւցընէ Որդի Աստուծոյ ես դուն։ Մատթ. ԺԴ. 22—33։

Համար ԺԸ։

Սա պատկերին մէջը գրված մարդը երկու տղայ ունէր. մէկ օր մը պզտիկ տղան եկաւ իր հօրը ըսաւ թէ, Հա՛յր՝ քու ստացուածքէդ ինձի ինկած բաժինը տուր ինձի. ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը։

Քանի մը օրէն ետքը պզտիկ տղան բոլոր բաները ժողվեց, հեռու երկիր մը գնաց, և հոն անառակութիւն ընելով ունեցածը փըճացուց։

Ետքը ան երկրին մէջը սաստիկ սով մը եղաւ, ու ինքը սկսեց չքաւոր ըլլալ. ուստի գնաց ան երկրին քաղաքացիներէն մէկուն քովը մնաւ. ան ալ իր արտը խրկեց զանիկայ խոզեր արածելու համար։

Ինքն առակ որդին անօթութենէն կը մարէր, ու կը փափաքէր խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցընելու, ու մէկը չէր տար անոր։

Ետքը ինքզինքին գալով ըսաւ. Քանի՛ բան-

ւոլները կան իմ հօրս տունը հացով լեցված, ու ես հոս սովէ կը մեռնիմ կը կորսըվիմ։

Ելլեմ երթամ իմ հօրս, և ըսեմ անոր. Հա՛յր, մեղանչեցի երկինքին դէմ և քու առջևդ. և ալ արժանի չեմ քու որդիդ ըսվելու, զիս քու վարձկաններուդ մէկուն պէս ըրէ։

Ու ելաւ իր հօրը եկաւ, և դեռ որ ինքը շատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկայ ու գութը շարժեցաւ, ելաւ և առջևը վազեց. անոր վիզը ինկաւ, ու համբուրեց զանիկայ։

Տղան ալ անոր ըսաւ. Հա՛յր՝ մեղանչեցի երկինքին դէմ և քու առջևդ. ու ալ արժանի չեմ քու որդիդ ըսվելու։

Հայրը ըսաւ իր ծառաներուն. Շուտ մը հանեցէք առաջին պատմուճանը, ու հագցուցէք անոր, և մատնի դրէք իր ձեռքը, ու կօշիկներ իր ոտքերը. և պարարտ եզը բերէ՛ք մորթեցէք, որ ուտենք և ուրախ ըլլանք. ինչու որ աս իմ որդիս մեռած էր՝ ու ողջընցաւ, կորսըված էր՝ ու գտնըվեցաւ. և սկսեցին ուրախ ըլլալ։

Ընդ անառակին որդւոյ գոչեմք
Ամ Հայրըդ գթած,
Մեղաք յերկինս և առաջի քո
Քաւիչ յանցանաց.
Եւ՛ ընդ առաջս սիրով գրկեա՝ համբուրիւ,
Մաքրեա՝ զմեզ 'ի մեղաց մերոց։

Գործք. ԺԶ։

Եւ կէս գիշերին Պօղոս ու Շիղա աղօթք կ՚ընէին և զՔրիստոսած կ՚օրհնէին, ու բանտարկեալներն ալ մտիկ կ՚ընէին իրենց։

Եւ յանկարծակի մեծ շարժ մը եղաւ, անանկ որ բանտին հիմերը թնտացին. և անմիջապէս ամէն դռները բացվեցան, ու ամենուն կապերը արձակեցան։

Բանտապետը երբոր արթընցաւ՝ և բանտին դռները բացված տեսաւ, թուրը քաշեց՝ և կ՚ուզեր ինքզինքը սպաննել, կարծելով որ կապվածները փախեր են։

Պօղոս ալ բարձր ձայնով կանչեց ու ըսաւ. Դուն քու անձիդ վնաս մը մի՛ ըներ. ինչու որ ամէնքս ալ հոս ենք։

Ճրագ մը ուզեց՝ և ներս վազեց, ու զարհուրելով Պօղոսին և Շիղային առջևը ինկաւ։

Եւ անոնք դուրս բերելով ըսաւ. Տէրեր Ինծի ի՞նչ պէտք է ընել որ փրկըվիմ։

Ընոնք ալ ըսին · Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին , ու պիտի փրկըվիս դուն՝ և քու բոլոր տունդ :

Եւ Տէրոջը խօսքը խօսեցան անոր , ու ան ամենուն որ իր տանը մէջն էին :

Եւ առաւ անոնք գիշերվան նոյն ժամուն՝ անոնց վէրքերը լուաց , և շուտ մը մկրտըվեցաւ ինքը ու բոլոր իրենները :

Եւ զանոնք իր տունը տարաւ , անոնց առջեւը սեղան դրաւ , և բոլոր տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ հաւատալով :

Եւ երբոր առտու եղաւ , զօրագլուխները խրկեցին սպասաւորները ու ըսին · Արձակէ՛ ատ մարդիկը :

Բանտապետն ալ ան խօսքերը Պօղոսին պատմեց , թէ զօրագլուխները խրկեցին որ արձակվիք · ուստի ելէ՛ք և խաղաղութեամբ գացէ՛ք :

Բայց Պօղոս ըսաւ անոնց · Մեզ յայտնապէս ծեծելով՝ որ Հռովմայեցի անմեղ մարդիկ ենք , բանտը ղրին , ու հիմա գաղտո՛ւկ կը հանեն մեզ · ատանկ չէ՛ , հապա թո՛ղ իրենք գան մեզ հանեն :

Եւ սպասաւորները պատմեցին զօրագլուխներուն ան խօսքերը · երբոր լսեցին թէ Հռովմայեցի են , խիստ վախցան , ու եկան աղաչեցին անոնց :

Եւ երբոր դուրս հանեցին՝ աղաչեցին որ ան քաղաքէն երթան :

Ընոնք ալ բանտէն ելլելով Լիդիային տունը մտան , ու եղբայրները տեսան՝ մխիթարեցին զանոնք , և գացին : Գործ · ԺԶ · 25—40 :

Պիտանի Հարցումներ։

Հ. Տղա՛ս, կրնաս ըսել ինծի, ո՞վ ստեղծեց քեզ։

Պ. Ան մեծ Աստուածը՝ որ երկինքն ու երկիրը ստեղծեց։

Հ. Աստուած ի՞նչ կ՚ընէ քեզի համար։

Պ. Գիշեր և ցորեկ կը պահէ զիս ամէն վնասներէ, ու միշտ աղէկութիւն կ՚ընէ ինծի։

Հ. Ուրեմն ի՞նչպէտք է որ ընես ան մեծ Աստուծոյն, որ ասանկ բարերար է քեզի։

Պ. Նախ՝ պէտք է որ սորվիմ զինքը ճանչնալ, և ապա ջանամ ամէն կերպով իրեն հաճոյ ըլլալ։

Հ. Աստուած ո՞ւր կը սորվեցընէ մեզի՝ զինքը ճանչնալ, ու իր կամքը կատարել։

Պ. Աստուածաշունչին մէջ։

Հ. Կրնաս ըսել թէ ո՞վ է Աստուած։

Պ. Աստուած՝ Հոգի մըն է, և թէպէտ մենք չենք կրնար տեսնել զինքը, բայց ան կը տեսնէ, գիտէ, ու կարող է ընել ամէն բան։

Հ. Ի՞նչ պարտիս ընել որ Աստուծոյ հաճոյ ըլլաս։

Պ. Պարտիմ կատարել իմ պարտաւորութիւնս որ ունիմ առ Աստուած և առ մարդիկ։

Հ. Ի՞նչ է քու պարտաւորութիւնդ առ Աստուած։

Պ. Իմ պարտքս է իրմէն վախնալ, ու զինքը պատուել ու սիրել, և իրեն ծառայել, ու աղօթք ընել, ու զինքը փառաւորել։

Հ. Ի՞նչէ քու պարտաւորութիւնդ առ մարդիկ։

Պ. Իմ պարտաւորութիւնս առ մարդիկ ան է. որ հնազանդիմ ծնողաց, միշտ ճշմարիտը խօսիմ, և պարկեշտ ու բարեսէր ըլլամ։

Հ. Աստուծոյ հաճոյ ըլլալովդ ի՞նչ օգուտ կ'ըլլայ քեզի։

Պ. Ան ատենը ես Աստուծոյ մէկ որդին կ'ըլլամ, ու ինքը հայր ու բարեկամ կ'ըլլայ ինծի յաւիտեան։

Հ. Ի՞նչ պիտի ըլլաս, թէ որ դուն Աստուծմէ չվախնաս, և չիրես զինքը, ու չուզես իրեն հաճոյ ըլլալ։

Պ. Ան ատենը չար տղայ մը պիտի ըլլամ, և Ամենակարող Աստուած սաստիկ պիտի բարկանայ ինծի։

Հ. Ինչո՞ւ համար կը վախնաս Աստուծոյ բարկութենէն։

Պ. Վասն զի ինքը կարող է մեռցընել իմ մարմինս, ու թշուառ վիճակի մէջ ձգել իմ հոգիս՝ մեռնելէս ետև։

Հ. Բայց արդէն բան մը ըրած չես դուն որ Աստուած բարկանայ քեզի։

Պ. Այո՛. կը վախնամ որ շատ անգամ մեղք գործեր եմ Աստուծոյ դէմ, ու իր բարկութեանը արժանացեր եմ։

Հ. Ի՞նչ է Աստուծոյ դէմ մեղք գործելը։

Պ. Աստուծոյ դէմ մեղք գործելը, Աստուծոյ արգիլած բանը ընել, ու հրամայածը չընելն է։

Հ. Ի՞նչ պարտիս ընել Աստուծոյ բարկութենէն ազատելու համար, որուն արժանացեր ես քու մեղքերովդ։

Պ. Պարտիմ զղջալ իմ մեղքերուս վրայ, ու խնդրել Աստուծմէ որ ներէ ինծի առջի ըրածներս, ու անկէ ետքը պարտիմ լաւ կեանք ապրել անոր։

Հ. Արդեօք Աստուած քեզի պիտի ներէ, թէ որ իրմէն թողութիւն խնդրես։

Պ. Այո՛, վստահիմ իր ողորմութեանը՝ կը յուսամ որ պիտի ներէ ինծի Յիսուս Քրիստոսի ըրած հնազանդութեանը ու կրած չարչարանքներուն համար։

Հ. Դիտես ո՞վ է Յիսուս Քրիստոս։

Պ. Աստուծոյ մէկ հատիկ որդին է, որ երկինքէն իջաւ, մեզ՝ մեր մեղքերէն ու Աստուծոյ բարկութենէն փրկելու։

Հ. Ի՞նչ ըրաւ Քրիստոս մարդկային ազգը փրկելու համար։

Պ. Ինքը Աստուծոյ օրէնքին հնազանդեցաւ, ու մեզի ալ սորվեցուց որ հնազանդինք անոր։

Հ. Ի՞նչ չարչարանք կրեց Քրիստոս, մարդոց հոգիները փրկելու համար։

Պ. Ինքը մեղաւորներուն համար մեռաւ, որոնք Աստուծոյ հրամանը չպահելով՝ մահուան արժանացեր էին։

Հ. Ո՞ւր է հիմա Յիսուս Քրիստոս։

Պ. Ինիկայ յարութիւն առնելով երկինքը գնաց, որ հոն՝ տեղ պատրաստէ անոնց հա-

մար ; որոնք Աստուծոյ կը ծառայեն ; ու կը սիրեն իր որդին Յիսուսը ։

Հ. Դուն ինքնիրենդ կրնաս սիրել զԱստուած , ու անոր ծառայել ։

Պ. Ո՛չ. ես չեմ կրնար ընել ան բանը ինքիրմէս. բայց Աստուած կ՚օգնէ ինձի իր Սուրբ Հոգիովը , թէ որ ես իրմէն խնդրեմ զանիկայ ։

Հ. Յիսուս Քրիստոս վերատին աշխարհք պիտի գա՞յ ։

Պ. Քրիստոս վերատին պիտի գայ , և հաշիւ ուզէ ինձմէ ու բոլոր մարդոցմէ մեր ըրած բաներուն համար ։

Հ. Ինչո՞ւ համար սա հաշիւը տրուելու է ։

Պ. Ընոր համար որ Աստուծոյ որդիքը այս ինքն արդարները՝ անանկ ալ մեղաւորները իրենց գործքերուն փոխարէնը ընդունին ։

Հ. Թէ որ գէշ ըլլաս՝ ի՞նչ պիտի ըլլայ քեզի ։

Պ. Եթէ գէշ ըլլամ նէ , դժոխքին յաւիտենական հուրին մէջ պիտի ձգուիմ , Թշուառ և չար էակներուն հետ ։

Հ. Ո՞ւր պիտի երթաս՝ թէ որ Աստուծոյ որդի ըլլաս ։

Պ. Թէ որ Աստուծոյ որդի ըլլամ , երկինքը պիտի երթամ , և հոն պիտի բնակիմ Աստուծոյ հետ յաւիտեան ։

Պապո-էրանֆիերը գէրէ՞ս ։

Աստուած աս բոլոր խօսքերը զրուցեց՝ ըսելով. Ես եմ Եհովայ քու Աստուածդ՝ որ քեզ Եգիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հանեցի ։

Իմ առջևս ուրիշ աստուածներ չունենա՛ս ։

Դուն քեզի կուռք չշինե՛ս, ո՛չ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպագութիւն չընե՛ս, ու զանոնք չպաշտե՛ս. ինչու որ ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ՚ատեն զիս. և կ՚ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս, ու իմ պատուիրանքներս կը պահեն ։

Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնե՛ս. ինչու որ Տէրը՝ իր անունը պարապ տեղը բերան առնողը՝ անմեղ պիտի չսեպէ ։

Հանգստութեան օրը մի՛տքդ բեր՝ անիկայ սուրբ պահելու համար ։ Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդ օրը՝ Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. ան օրը գործ մը պիտի չգործես, ո՛չ դուն՝ ո՛չ քու որդիդ՝ ո՛չ քու աղջիկդ՝ ո՛չ քու ծառադ ու աղախինդ՝ ո՛չ քու անասունդ՝ ո՛չ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրվան մէջ երաւ երկինքը ու երկիրը՝ ծո-

վը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթնե-
րորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհ-
նեց հանգստութեան օրը՝ ու սրբեց զանիկայ։

Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ
երկար ըլլան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր
Աստուածդ կու տայ քեզի։

Սպանութիւն մի՛ ըներ։

Շնութիւն մի՛ ըներ։

Գողութիւն մի՛ ըներ։

Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛
ըներ։

Քու դրացիիդ տանը մի՛ ցանկար. քու դրա-
ցիիդ կնկանը՝ կամ անոր ծառային՝ կամ անոր
աղախինին՝ կամ անոր եզին՝ կամ անոր իշուն՝
և քու դրացիիդ ամենևին մէկ բանին մի՛ ցան-
կար։ Ելից Է. 1—17։

Պապա-էրանէնէրու Բովանդակութիւնը։

Վա՛ղուանպետ՝ ո՞ր պատուիրանքը մեծ է օրէն-
քին մէջը։ Ու Յէսուս ըսաւ անոր. Քու Տէր
Աստուածդ պիտի սիրես քու բոլոր սրտէդ, և
քու բոլոր անձէդ, և քու բոլոր միտքէդ։ Այս է
մեծը ու առաջին պատուիրանքը։ Երկրորդը
ասոր նման՝ քու ընկերդ պիտի սիրես քու անձիդ
պէս։ Այս երկու պատուիրանքէս կախուած են
բոլոր օրէնքը և մարգարէները։ Մատթ. Իբ.
36—39։

Օրէնքին պատուելը։

Ընոնք որ օրէնքին գործքերէն են՝ անէծքի տակ են. որովհետև գրուած է թէ՝ Անիծեա՛լ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը գրուածներուն ամենուն մէջ չկենար՝ բոլորը կատարելու։ Գաղ. Գ. 10։

Ա-էպոստանէն Ռէնարդ-ին-ը։

Յայտնի՛ ըլլայ ձեզի՝ մարդի՛կ եղբայրներ, որ ասով ձեզի մեղայ թողութիւն կը քարոզուի. Եւ ան ամէն բաներէն որ Մովսէսին օրէնքովը չկրցաք արդարանալ, ասով ամէն ո՛վ որ հաւատայ, կ՚արդարանայ։ Գործ. Ժգ. 38, 39։ Վասն զի Աստուած անիկայ՝ որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց. որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդարները եղած ըլլանք։ Բ Կորնթ. Ե. 21։

Աղօթք Տէրունական։

Դրաբար	Աշխարհաբար
Հա՛յր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զՀաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ	Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ. մեր ամէն աւուր հացը՝ ասօր մեզի տո՛ւր.

զպարտիս մեր ։ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ և մի՛ տանիր զմեզ ՝ի փորձութիւն ։ այլ փրկեա՛ զմեզ ՝ի չարէ ։ զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ։ ամէն ։

և մեզի ներէ՛ մեր պարտքերը ։ ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն ։ ու մեզ փորձութեան մի՛ տանիր ։ հապա՝ չարէն մեզ ազատէ ։ ինչու որ քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը ։ յաւիտեանս ։ ամէն ։

Հանգանակ Նիկիական ։

Գրաբար

Հաւատամք ՝ի մի Աստուած Հայրն ամենակալ ։ յԱրարիչն երկնի և երկրի ։ երևելեաց և անտեսանելեաց ։ Եւ ՝ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ ։ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին ։ այսինքն յէութենէ Հօր ։ Աստուած յԱստուծոյ ։ լոյս ՝ի լուսոյ ։ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ։ ծնունդ և ոչ արարած ։ նոյն էութեամբ ՝ի բնութենէ Հօր ։ որով ամենայն ինչ եղև յերկինս

Աշխարհաբար

Կը հաւատանք մի Աստուած ամենակալ Հօրը ։ երկինքին ու երկրին ։ երևցածներուն ու անտեսանելիներուն Ստեղծողին ։ Եւ մի Տէր Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին ։ Հօր Աստուծմէ ծնած միածին ։ այսինքն Հօրը էութենէն ։ Աստուած Աստուծմէ ։ լոյս լուսէն ։ ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստուծմէ ։ ծնունդ ու չէ՛ թէ արարած ։ նոյն էութիւնը Հօրը բնութենէն է ։ որ անով եղաւ ամէն բան երկինքի մէջ ու երկրի վրայ ։

և 'ի վերայ երկրի ։ երե-
ւելիք և անսերևոյթք ։ որ
յաղագս մեր մարդկան և
վասն մերոյ փրկութեան՝
իջեալ 'ի յերկնից մարմնա-
ցաւ ։ մարդացաւ ։ ծնաւ
կատարելապէս 'ի Մարի-
ամայ սրբոյ կուսէն Հոգ-
ւովն Սրբով ։ որով էառ
զմարմին ։ զհոգի ։ և զը-
միտ ։ և զամենայն որ ինչ
է 'ի մարդ՝ ճշմարտապէս
և ոչ կարծեաք ։ չարչա-
րեալ ։ խաչեալ ։ թաղեալ ։
յերրորդ աւուր յարու-
ցեալ ։ եկեալ 'ի յերկինս նո-
վին մարմնովն՝ նստաւ ընդ
աջմէ Հօր ։ գալոց է նովին
մարմնովն և փառաւք Հօր
'ի դատել զկենդանիս և զը-
մեռեալս ։ որոյ թագա-
ւորութեանն ոչ գոյ վախ-
ճան ։ Հաւատամք և 'ի
Սուրբ Հոգին ։ յանեղն և
'ի կատարեալն ։ որ խօսե-
ցաւ յօրէնս և 'ի մարգա-
րէս և յաւետարանս ։ որ
էջն 'ի Յորդանան ։ քա-
րոզեաց զառաքեալն ։ և
բնակեցաւ 'ի սուրբսն ։
Հաւատամք և 'ի մի մի-
երևցածները ու անսերե-
ւոյթները ։ որ ինքը մեզի
մարդիկներուս համար և
մեր փրկութեանը հա-
մար՝ երկինքէն իջնելով
մարմին առաւ ։ մարդ ե-
ղաւ ։ սուրբ կոյս Մարի-
ամէն ծնաւ կատարելա-
պէս Սուրբ Հոգիով ։ ո-
րով առաւ մարմին ։ հո-
գի ։ ու միտք ։ և մարդու
վրայ եղած ամէն հանգա-
մանքները՝ ճշմարտապէս
ու չէ թէ կարծիքով ։ չար-
չարուելով ։ խաչուելով ։
թաղուելով ։ իրեք օրէն
ետքը յարութիւն առնե-
լով ։ նոյն մարմինով եր-
կինքը ելլելով Հօրը աջ
կողմը նստաւ ։ Նոյն մար-
մինովը ու Հօրը փառ-
քովը գալու է կենդանի-
ները ու մեռածները դա-
տելու ։ որուն թագաւո-
րութիւնը վերջ չունի ։
Կը հաւատանք և անեղ ու
կատարեալ Սուրբ Հոգի-
ին ։ որ օրէնքով և մար-
գարէներով ու Աւետա-
րաններով խօսեցաւ ։ որ
Յորդանան գետը իջաւ ։
խրկուած Փրկիչը քարոզեց ։
ու սուրբերուն մէջը բնա-
կեցաւ ։ Կը հաւատանք
նաև միայն մէկ ընդհան-

այն ընդհանրական և յառաքելական եկեղեցի. ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց. ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց. յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս :

լական ու առաքելական եկեղեցի, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, քաւութեան ու մեղքի թողութեան. մեռելոցն յարութիւն առնելուն, հոգիներուն ու մարմիններուն յաւիտենական դատաստանին. երկնից արքայութեանը ու յաւիտենական կեանքին :

ԱՌԱՂՄՈՍ Ա

1 Երանի՛ ան մարդուն՝ որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չերթար, ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար, և ծաղր ընողներուն նստած տեղը չնստիր.

2 Հապա անոր կամքը Աստուծոյ օրէնքին մէջն է, ու գիշեր յորեկ անոր օրէնքին վրայ կը մտածէ :

3 Եւ անիկայ ջուրի ճամբաները տնկուած ծառի պէս պիտի ըլլայ, որ իր ժամանակին իր պտուղը կու տայ. ու անոր տերևը պիտի չթափի, և ի՛նչ բան որ ընէ՝ պիտի յաջողի :

4 Այսանկ չեն ամբարիշտները, հապա մղեղին պէս՝ որ հովը կը ցրուէ,

5 Այսոր համար ամբարիշտները դատաստանին մէջ պիտի չկրնան կենալ, ո՛չ ալ մեղաւորները արդարներուն ժողովքին մէջ :

6 Վասն զի Տէրը կը ճանչնայ արդարներուն

ճամբան · բայց ամբարիշտներուն ճամբան պի-
տի կորսուի ։

ՍԱՂՄՈՍ Ժ. Թ.

1 Երկինքը՝ Աստուծոյ փառքը կը պատմէ, ու երկնից հաստատութիւնը անոր ձեռքին գործքերը կը ցուցընէ ։

2 Օրը՝ օրին կը յայտնէ խօսքը, ու գիշերը գիշերին կը ցուցընէ գիտութիւնը ։

3 Չկայ զրոյց ու չկան խօսքեր · անոնց ձայնը չլսուիր ։

4 Այլ ամէն երկիր ելաւ անոնց հնչիւնը, ու մինչև աշխարհի ծայրը՝ անոնց խօսքը · անոնց մէջը արևին համար վրան մը հաստատեց·

5 Ու անիկայ իր առագաստէն ելած փեսայի պէս է · հզօր մարդու պէս իր ճամբան վազելով կ'ուրախանայ ։

6 Անոր ելքը երկնից ծայրէն է, ու անոր շրջանը մինչև անոնց ծայրերը · և անոր տաքութենէն բան մը չծածկուիր ։

7 Տէրոջը օրէնքը կատարեալ է, հոգին կը նորոգէ · Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է, տգէտը իմաստուն կ'ընէ ։

8 Տէրոջը կանոնները շիտակ են, սիրտը կ'ուրախացընեն · Տէրոջը պատուիրանքները պայծառ են, աչքերուն լոյս կու տան ։

9 Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան կը մընայ · Տէրոջը դատաստանները ճշմարիտ են, բոլորովին արդար են ։

10 Ցանկալի են անոնք ոսկիէն, ու շատ փոր-
ձուած ոսկիէն. մեղրէն անուշ են, ու խորիս-
խէ կաթած մեղրէն։

11 Նաև քու ծառայդ անոնցմով խրատուե-
ցաւ, ու անոնք պահելէն շատ վարձք կայ։

12 Ո՛վ կրնայ միտք առնել իր յանցանքնե-
րը. ծածուկ մեղքերէն զիս մաքրէ՛.

13 Ամբարտաւան մեղքերէն ալ պահէ՛ քու
ծառայդ. թո՛ղ անոնք ինծի չտիրեն. անատենը
անմեղ կ՚ըլլամ, ու կը մաքրուիմ մեծ անօրէ-
նութենէն։

14 Իրնիս խօսքերը ու սրտիս խորհուրդնե-
րը քու առջեւդ ընդունելի ըլլան, ո՛վ Տէր՝ իմ
վէմս ու փրկիչս։

ՍԱՂՄՈՍ ԼԷ

1 Չարերուն համար մի՛ նեղանար, անօրէ-
նութիւն գործողներուն մի՛ նախանձիր.

2 Վասն զի խոտի պէս շուտով պիտի կըտ-
րուին, ու կանանչ խոտի պէս պիտի չորնան։

3 Տէրոջը յուսա՛ ու աղէկութի՛ւն ըրէ, երկ-
րի վրայ բնակէ՛ ու ճշմարտութեան մէջ արա-
ծուէ՛,

4 Ու Տէրոջմով ուրախացիր. և ան կու տայ
քեզի քու սրտիդ խնդրուածները։

5 Տէրոջը յանձնէ՛ քու ճամբադ, ու անոր
յուսա՛, և անիկայ պիտի կատարէ.

6 Ու դուրս պիտի հանէ քու արդարութիւնդ
լուսի պէս, քու իրաւունքդ կէս օրուան պէս։

7 Տէրոջը համբերէ՛ ու անոր սպասէ՛, և մի՛ նեղանար իր ճամբան յաջողութեամբ գացողին, խարէութիւն ընող մարդուն համար։

8 Դադրէ՛ բարկութենէն, ու սրդողելը վե՛ր ըրէ. մի՛ նեղանար, որ չարութիւն ընես։

9 Վասն զի չարագործները պիտի կորսուին, սակայն Տէրոջը համբերողները երկիրը պիտի ժառանգեն։

10 Վասն զի քիչ ժամանակէն ետև ամբարիշտը պիտի չըլլայ, անոր տեղը պիտի փընտռես, ու ինքը չկայ։

11 Սակայն հեզերը պիտի ժառանգեն երկիրը, ու խաղաղութեան առատութիւնովը ուրախ պիտի ըլլան։

12 Մեղաւորը արդարին դէմ չար կը խորհի, ու անոր վրայ ակռաները կը կճրտցընէ։

13 Տէրը ծաղր պիտի ընէ զանիկայ, վասն զի անոր օրը հասնելու վրայ կը տեսնէ։

14 Մեղաւորները թուր քաշեցին, ու աղեղնին լարեցին, աղքատը ու տնանկը վար ձգելու համար, շիտակ ճամբուն մէջ քալողները մեռցընելու համար։

15 Անոնց թուրը իրենց սիրտը պիտի մըտնէ, ու անոնց աղեղները պիտի կոտրտին։

16 Արդարին քիչ բանը շատ ամբարիշտներու առատ ստացուածքէն աղէկ է։

17 Ինչու որ ամբարիշտներուն բազուկները պիտի կոտրուին. բայց արդարներուն պաշտպանը Տէրն է։

18 Արդարներուն օրերը գիտէ Տէրը. և ա-

նոնց ժառանգութիւնը յաւիտենական պիտի ըլլայ ։

19 Փորձանքի ժամանակը պիտի չամչնան , ու սովի օրերը պիտի կշտանան ։

20 Բայց ամբարիշտները պիտի կորսուին , ու Տէրոջը թշնամիները աղուոր արօտի պէս պիտի անցնին , մուխի պէս պիտի անցնին ։

21 Ամբարիշտը փոխ կ'առնէ ու չվճարեր · սակայն արդարը կ'ողորմի ու կու տայ ։

22 Ինչու որ անոր օրհնածները պիտի ժառանգեն երկիրը · բայց անկէ անիծուածները պիտի կորսուին ։

23 Խարի մարդուն քայլերը Տէրոջմէ կը հաստատուին · ու Անիկայ անոր ճամբան կը սիրէ ։

24 Թէ և իյնայ , պիտի չկործանի · վասն զի Տէրը անոր ձեռքը կը բռնէ ։

25 Տղայ էի ու ծերացայ · բայց արդարը անտես եղած չտեսայ · կամ անոր զաւակը հաց մուրացող ։

26 Ամէն օր կ'ողորմի ու փոխ կու տայ · և անոր սերունդը օրհնուած է ։

27 Զարութենէ ե՛տ կեցիր ու աղէկութի՛ւն ըրէ , և յաւիտեան կը մնաս ։

28 Ինչու որ Տէրը կը սիրէ իրաւունքը , և իր սուրբերը երեսէ չձգեր · յաւիտեան կը պահուին անոնք · բայց ամբարիշտներուն սերունդը պիտի կորսուի ։

29 Արդարները պիտի ժառանգեն երկիրը , ու յաւիտեան անոր վրայ պիտի բնակին ։

30 Արդարին բերանը իմաստութիւն կը խօսի ,

ու անոր լեզուն իրաւունք կը զրուցէ ։

31 Իր Աստուծոյն օրէնքը իր սրտին մէջն է. և անոր քայլերը պիտի չահին ։

32 Մեղաւորը արդարը կը դիտէ, զանիկայ մեռցընելու համար ։

33 Տէրը անոր ձեռքը պիտի չձգէ զանիկայ, և դատաստան ըրած ատենը պիտի չդատապարտէ զանիկայ ։

34 Տէրոջը համբերէ՛ ու անոր ճամբան պահէ՛, և անիկայ քեզ կը բարձրացընէ որ երկիրը ժառանգես. ամբարիշտներուն սատակումը պիտի տեսնես ։

35 Ամբարիշտը զօրացած տեսայ, ու իր տեղը կեցող կանանչ ծառի մը պէս տարածուած ։

36 Բայց ան անցաւ, ու ահա՛ չկար. զանիկայ փնտռեցի, բայց չգտնուեցաւ ։

37 Արդարը նկատէ՛ ու ուղիղին նայէ՛. վասն զի ան մարդուն վերջը խաղաղութիւն է ։

38 Իսկ անօրէնները մէկտեղ պիտի կորսուին. ամբարիշտներուն վերջը պիտի փճանայ ։

39 Բայց արդարներուն փրկութիւնը Տէրոջմէն է, նեղութեան ժամանակը ինքը անոնց ապաւէնն է ։

40 Եւ Տէրը պիտի օգնէ անոնց, և պիտի ազատէ զանոնք. մեղաւորներէն պիտի ազատէ, ու պիտի փրկէ զանոնք, վասն զի անոր կը յուսան ։

33

ԵՐԳ

Ո՛վ մեծ Պահապան՝ մեր փոքր հասակին,
Լսէ՛ մեր խոնարհ աղօթքի ձայնին.
Քեզի ամէնքս ալ կ՚աղաչենք սրտանց,
Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Թարեկամ մանկանց։

Քու ողորմութեամբդ ամէն օր կ՚ապրինք,
Քու գթութեամբդ կանք ու կը շարժինք.
Ամէն մեղքերնիս ներէ՛, Տէր Աստուած,
Կ՚աղաչենք եղի՛ր Թարեկամ մանկանց։

Քու սուրբ շնորհքովդ զուն զմեզ մեծցո՛ւր,
Հաւատքով Յուսով Սիրով զօրացո՛ւր.
Սուրբ պատուիրանքդդ բոլոր մեր սրտանց,
Տո՛ւր մեզի պահել, Թարեկա՛մ մանկանց։

Երբոր մեր կեանքին օրերը հատնի,
Ու մարմիններնէնս հոգինիս զատուի.
Ընմա՛հ հոգինիս երկնային փառաց,
Արժանի՛ ըրէ, Թարեկա՛մ մանկանց։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ... Գ.Ի.Ս
ՀԱՄԱՀ-...
Գ.Ի.Ա Մեսրոպ Կաթ...
Ս. ՍՅՈՍՆԻԿՅԱՆ Ս...

2013
3257